

«ՌԵՆԵՍԱ» ՓԲԸ

**2011թ. ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ
ՆԵՐԿԱՅԱՅՎՈՂ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

2011թ. ընթացքում «ՌԵՆԵՍԱ» ՓԲԸ-ի ռազմավարության և գործունեության արդյունքների վրա որոշակի ազդեցություն են ունեցել ինչպես միջազգային, այնպես էլ ՀՀ ներքին շուկաներում տեղի ունեցած իրադարձությունները:

2010-2011թթ. Հայաստանում ձեռնարկված մի շարք հակաճգնաժամային միջոցառումները հնարավորություն տվեցին հարթել և ինչու չէ նաև հաղթահարել 2008-2009թթ. համաշխարհային տնտեսական ճգնաժամի անբարենպաստ ազդեցությունը, որի արդյունքում ՀՀ -ում 2010 և 2011թթ.-ին գրանցվեց համապատասխանաբար 2.1% և 4.6% տնտեսական աճ: Սակայն 2011թ.վերջին ԱՄՆ և Եվրոգոտու երկրների ֆինանսական և իրական սեկտորներում տեղի ունեցած զարգացումները ամենայն հավանականությամբ 2012թ.կհանգեցնեն ՀՀ տնտեսական աճի դանդաղեցմանը, ինչը կստիպի Ընկերությանը իր գործունեության մեջ լինել առավել աչալուրջ և պատրաստ ադեկվատ միջոցառումների իրադրության ցանակացած փոփոխության դեպքում:

Միջազգային շուկաներում տեղի ունեցող քաղաքական և տնտեսական իրադարձություններից Ընկերությունը կրում է հիմնական գործընկեր երկրների ֆինանսական շուկան կանխորոշող մակրոտնտեսական ցուցանիշների փոփոխության ազդեցությունը:

Համաշխարհային տնտեսության ներկա իրավիճակը ֆինանսական կայունության տեսանկյունից գնահատելը շատ բարդ է: Առաջին հայացքից թվում է, թե իրավիճակը հիմնականում կարգավորվել է, սակայն գոյություն ունեցող տնտեսական անհավասարակշռությունները շարունակում են խորանալ: Երկրների տնտեսական զարգացածության, տնտեսական աճի մակարդակների, տնտեսության տարբեր ճյուղերի աճի և շուկայի տարբեր հատվածների միջև քանակական ու որակական տարբերությունները շարունակում են խորանալ, և այդ տարբերությունները կարելի է դիտարկել որպես նախազգուշացնող նշաններ՝ ապագա ռիսկերի վերաբերյալ:

Համաշխարհային տնտեսության զարգացումները թեև միանշանակ դրական չեն եղել, այնուամենայնիվ, 2011թ. բարենպաստ են եղել Հայաստանի արդյունաբերության աճի, արտահանման և բնակչության եկամուտների վերականգնման համար: Հիմնական բացասական ազդակներից են գների աննախադեպ աճի արդյունքում պարենային ապրանքների շուկաներից ներթափանցած գնաճային ճնշումները: Դեռևս նախորդ տարի սկսված տնտեսական վերականգնումը շարունակվել է նաև 2011 թ. պայմանավորված ինչպես արտաքին, այնպես էլ ներքին դրական զարգացումներով

2011թ. տնտեսական աճը կազմել է շուրջ 4.6 %, իսկ ՀՆԱ-ի ինդեքս-դեֆլյատորը՝ 105.7 %, մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն 3201 ԱՄՆ դոլար: 2011թ. պետական բյուջեի եկամուտները կազմել են 825.36 մլրդ. դրամ, ծախսերը՝ 890.1 մլրդ դրամ:

Փաստենք, որ 2011թ.-ին ևս ֆինանսական կայունության ապահովումը և ֆինանսական համակարգի նկատմամբ վստահության վերականգնումը շարունակեցին մնալ որպես առաջնային խնդիր ինչպես զարգացած, այնպես էլ զարգացող երկրների համար:

2011թ. ՀՀ ֆինանսական շուկայի զարգացումները հիմնականում պայմանավորված են եղել *ԿԲ դրամավարկային քաղաքականության* խստացմամբ և շուկայական տոկոսադրույքների աճով: Սակայն, քանի որ տարեսկզբին բանկային համակարգն ուներ բավականին բարձր կուտակված իրացվելիություն, ապա նույնիսկ վերոնշյալ փոփոխությունների ներքո, տնտեսության աշխուժացմանը զուգընթաց, բանկային համակարգը ցուցաբերել է բարձր ակտիվություն վարկային շուկայում, և արդյունքում արձանագրվել է վարկերի աճ ու տոկոսադրույքների փոքր անկում:: Այսպիսով՝ 2011թ. ընթացքում նվազել են ինչպես ֆինանսական համակարգում կուտակված ավելցուկային բարձր իրացվելի միջոցները, այնպես էլ շուկայական տոկոսադրույքների միմյանցից շեղվածությունը, ինչն իր հերթին առավել բարձրացրել է դրամավարկային գործիքների կիրառման արդյունավետությունը:

2011թ. ՀՀ տարեկան գնաճը կազմել է 4.7%, որը գտնվում է նպատակային $4 \pm 1.5\%$ տատանումների թույլատրելի միջակայքում:

Ներքին արժույթային շուկայում իրավիճակը գնահատվել է կայուն: Հատկանշական է, սակայն, որ վերջինս մեծապես պայմանավորված է տրանսֆերտների և զուտ գործոնային եկամուտների տատանումներով, հետևաբար համաշխարհային տնտեսական զարգացումները իրենց էական ազդեցությունն են ունենում ներքին արժույթային շուկայի տատանողականության վրա:

Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից իրականացվող *արժեթղթերի առուվաճառքի և ռեպո գործառնություններում* գերակշռել են պետական պարտատոմսերը: ՀՀ բաժնետոմսերի շուկան դեռևս շարունակում է մնալ փոքր, որի մասին են վկայում այլ երկրների համեմատ կապիտալացման և շրջանառության փոքր ծավալները:

Քանի որ Ընկերությունը կրում է ինչպես ՀՀ տնտեսության ներսում, այնպես էլ միջազգային շուկաներում կատարվող երևույթների և փոփոխությունների ազդեցությունը, այս փոփոխությունները առաջացնում են տարբեր տիպի ռիսկեր, որոնք իրենց ազդեցությունն են թողնում Ընկերության ինչպես ռազմավարական, այնպես էլ կարճաժամկետ և միջին ժամկետային ծրագրերի և դրանցից բխող գործառնությունների վրա:

2011թ. ընթացքում ևս «Ռենեսա» ՓԲԸ-ի քաղաքականության և գործունեության արդյունքների վրա որոշակի ազդեցություն են ունեցել ինչպես միջազգային, այնպես էլ ՀՀ

մակրոտնտեսական միջավայրի, ՀՀ ֆինանսական շուկայի և ենթակառուցվածքների զարգացումներն ու իրադարձությունները:

Ընկերությունը 2011թ. ընթացքում վարում էր ակտիվ և միևնույն ժամանակ սիտուատիվ ներդրումային քաղաքականություն՝ օպերատիվ կերպով արձագանքելով շուկայում ստեղծված իրավիճակի ցանկացած փոփոխությանը՝ ձգտելով ապահովել ներդրումային պորտֆելի միջին եկամտաբերության աճը վերջինիս արժեքի փոփոխման (կրճատման կամ ավելացման) միջոցով: Արդյունքում Ընկերությանը հաջողվեց ապահովել ներդրումային պորտֆելի աստիճանաբար աճող եկամտաբերություն՝ հունվար-մարտ ամիսներին հաշվարկված շուրջ 13.89%-ից տարեվերջին այն հասցնելով շուրջ 14.28%-ի: Ընկերությունը դա իրագործեց տարվա առաջին և երկրորդ եռամսյակներում ներդրումային պորտֆելի արժեքի աստիճանաբար ավելացմամբ, այնուհետև, տարվա երրորդ եռամսյակում, հաշվի առնելով ՀՀ ֆինանսական շուկայում ձևավորված նպաստավոր իրավիճակը և աստիճանաբար կրճատելով պորտֆելի արժեքը 1.6 մլրդ ՀՀ դրամով՝ այն հասցրեց շուրջ 4.2 մլրդ ՀՀ դրամի: Այնուհետև չորրորդ եռամսյակում, շարունակելով աստիճանաբար ավելացնել պորտֆելի արժեքը՝ տարին եզրափակեց շուրջ 4.5 մլրդ ՀՀ դրամի պորտֆելի օպտիմալ արժեքով և շուրջ 258.1 մլն ՀՀ դրամ զուտ շահույթի դրական մեծությամբ:

Չնայած համաշխարհային տնտեսական ճգնաժամի երկրորդ ալիքի հետ կապված բացասական սպասումների զսպողական ազդեցությանը ՀՀ տնտեսության աճի վրա՝ 2011թ. ընթացքում Ընկերությունն իրականացնելով շուրջ 5.7 մլրդ ՀՀ դրամի պետական պարտատոմսերի առք և շուրջ 5.2 մլրդ ՀՀ դրամի՝ վաճառք, ընդհանուր առմամբ իրագործել է պորտֆելի ծավալային աճի քաղաքականություն՝ հիմք ընդունելով պորտֆելի միջին եկամտաբերության աճի և արժեթղթերի ձեռքբերման գնի նվազման գործոնների գերակայությունը, որի արդյունքում 2011 թվականը հաջողվել է ամփոփել առավել բարելավված պորտֆելով՝ թե՛ կառուցվածքային, և թե՛ ծավալային առումով: 2011թ.-ի ընթացքում ընկերությանը իրականացրել է նաև կապիտալի համալրում արդեն 150 մլն ՀՀ դրամով: Աշխատանքներ են տարվել նաև Ընկերության ճանաչելիության բարձրացման նպատակով, մասնավորապես իրականացվել են մարքեթինգային միջոցառումներ:

2011թ. Ընկերությունը շարունակել է իր գործունեությունը ՀՀ ֆինանսական շուկայում, մասնավորապես, Ընկերությունն ակտիվ գործունեություն է ծավալել ՀՀ պետական պարտատոմսերի առաջնային և երկրորդային շուկաներում: Ընկերության գործունեությունը մեծամասամբ կենտրոնացված է եղել պետական գանձապետական միջնաժամետ (մինչև 3-5 տարի մարման ժամկետ ունեցող) արժեկտրոնային պարտատոմսերով դիլերային գործառնությունների վրա, ինչը պայմանավորված էր այդ արժեթղթերի իրացվելիության եկամտաբերության հարաբերակցության առավել բարենպաստ լինելու հանգամանքով այլ արժեթղթերի համեմատ:

Ընկերությունը 2011թ.-ի ողջ ընթացքում, ելնելով դիվերսիֆիկացիայի անհրաժեշտությունից, ինչպես նաև նոր գործիքներ օգտագործելու նկատառումներից,

պահպանել և զգալի չափով ավելացրել է դեռևս 2009թ.-ից ձևավորված կորպորատիվ պարտատոմսերի պորտֆելը, որը ներկայումս կազմում է 20 մլն ՀՀ դրամ, իսկ 2012 թ.-ի ավարտին նախատեսվում է կորպորատիվ արժեթղթերի ծավալն արձանագրել 30-35 մլն ՀՀ դրամի սահմաններում՝ ներդրումներ կատարելով ՀՀ ԿԲ-ի կողմից տրված բարձր վարկանիշ ունեցող ձեռնարկությունների կողմից թողարկված արժեթղթերում: Բացի այդ Ընկերությունը 2011թ.ի հունվարից շարունակել է մարքեթմեյքերի ծառայությունների մատուցումը կորպորատիվ պարտատոմսերի շուկայում և հանդիսանում է ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի պարտատոմսերի մարքեթմեյքեր:

Բացի այդ Ընկերությունը շարունակում է իրականացնել պետական և կորպորատիվ արժեթղթերի առք ու վաճառք, ռեպո և հակադարձ ռեպո գործարքներ, արտարժույթի անկանխիկ առք ու վաճառքի և սվոպ գործարքներ:

Գործունեության շրջանակների ընդլայնման նպատակով 2010թ. Ընկերությունը արդեն ստացել էր ՀՀ ԿԲ-ից հայցվող փոփոխությունների գրանցումը Ընկերության ՆԸ ԹԻՎ 0005 ներդրումային ծառայությունների մատուցման լիցենզիայում, հնարավորություն ստանալով իրականացնել արժեթղթերի երաշխավորված և չերաշխավորված տեղաբաշխման, արժեթղթերի փաթեթի կառավարման, արժեթղթերում ներդրումների հետ կապված խորհրդատվության տրամադրման ներդրումային ծառայությունները, ինչպես նաև հետևյալ ոչ հիմնական ծառայությունները. արժեթղթերի թողարկման և տեղաբաշխման կազմակերպման հետ կապված ծառայությունների մատուցումը; խորհրդատվության տրամադրումն ընկերություններին կապիտալի կառուցվածքի, կորպորատիվ ռազմավարության հարցերի վերաբերյալ, ընկերությունների վերակազմակերպման հետ կապված խորհրդատվական և այլ ծառայությունների մատուցումը, արժեթղթերով գործարքների հետ կապված հետազոտությունների, ֆինանսական վերլուծությունների և այլ ընդհանուր ներդրումային առաջարկությունների կազմումը և տարածումը: Այս ամենը 2011թ. Ընկերությանը հնարավորություն ընձեռեց ավելի ընդլայնել արժեթղթերի շուկայում և ներդրումային բնագավառում մատուցվող ծառայությունների ցանկը և ավելի ամրապնդել արժեթղթերի շուկայում Ընկերության դերակատարությունը: Ինչպես նաև Ընկերությունն արդեն ձեռնարկում է անհրաժեշտ միջոցառումներ 2012թ. առաջին կիսամյակում ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից սահմանված նորմատիվ իրավական պահանջներին համապատասխան արժեթղթերի պահառության ոչ հիմնական ծառայության մատուցման իրականացման համար:

2011թ.-ի ընթացքում բարեփոխվել է Ընկերության ընդհանուր և կորպորատիվ կառավարման համակարգը, համաձայն որի Ընկերությունում ստեղծվել է կառավարման նոր մարմին՝ Ընկերության Խորհուրդը, որի ձևավորման նպատակը որոշումների ընդունման օպերատիվության և ընթացիկ գործունեության վերահսկողության մակարդակի բարձրացումն է:

2011թ.-ին իրականացվել են նաև Ընկերության նախատեսումները ֆունկցիոնալ առումով կառուցվածքի փոփոխությունների վերաբերյալ, համաձայն որի Ընկերության նախկին երկու՝ արժեթղթերով գործառնությունների և արտարժույթով գործառնությունների

բաժինների փոխարեն, ձևավորվել են երեք նոր բաժիններ՝ դիվիդնդի բաժին, ներդրումային գործառնությունների բաժին և կորպորատիվ ֆինանսավորման բաժին, որը կատարվել է ելնելով Ընկերության կողմից իրականացվող և մատուցվող ներդրումային ծառայությունների պատշաճ որակի ապահովման, այդ ծառայությունների և գործառնությունների նկատմամբ նորմատիվ իրավական պահանջների պահպանման, ներքին վերահսկողության համակարգի, ինչպես նաև ընդհանուր և կորպորատիվ կառավարման համակարգի կատարելագործման նկատառումներից: Սույն փոփոխությունը ենթադրում է նոր կադրերի ներգրավում առաջիկա տարիներին:

Այս ամենի հետ մեկտեղ Ընկերությունը տիրապետում է ինչպես ՀՀ, այնպես էլ միջազգային ֆինանսական շուկաների հետ կապված ամենաթարմ տեղեկատվությանը միացված լինելով միջազգային տեղեկատվական համակարգերին և հնարավորություն ունենալով մշտապես ճշգրտելու կարճաժամկետ ծրագրերը և դրանից բխող գործողությունները, որը իր հերթին թույլ կտա հնարավորինս վերահսկելու իրականացվող գործառնությունների հետ կապված պոտենցիալ ռիսկերը և կատարելու Ընկերության առջև դրված ռազմավարական խնդիրները:

Այժմ դիտարկենք Ընկերության 2011թ. վերջի դրությամբ կարևորագույն ֆինանսական ցուցանիշները: Ընկերության ընդհանուր ակտիվները տարվա սկզբից աճել են ավելի քան 2.5%-ով և 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել են 5,286,104 հազար ՀՀ դրամ (համախառն ակտիվների մակարդակը 2010թ. վերջին կազմում էր 5,157,456 հազար ՀՀ դրամ): Նախորդ տարվա հետ համեմատած՝ 2011թ.-ին Ընկերության արժեթղթերի պորտֆելն աճել է ավելի քան 193.7 %-ով, ինչն պայմանավորված է պորտֆելի ճիշտ կառավարման արդյունքում ծախսերի (ռեպո-տոկոսների) կրճատմամբ:

Ինչ վերաբերվում է պորտֆելի կառուցվածքին, ապա դրանում գերակշռում են ՀՀ պետական պարտատոմսերը, որոնց բաժինն արժեթղթերի պորտֆելում 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 99.5% (շուրջ 4,412,565 հազար ՀՀ դրամ): Ոչ պետական արժեթղթերի բաժինը պորտֆելում 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 0.5% (շուրջ 20,328 հազար ՀՀ դրամ):

Ընկերության ընդհանուր պարտավորությունները տարվա սկզբից նվազել են 2.4 %-ով և 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել են 4,461,832 հազար ՀՀ դրամ (ընդհանուր պարտավորությունների մակարդակը 2010թ. վերջին կազմել էր 4,569,620 հազար ՀՀ դրամ):

Ընդհանուր պարտավորությունների 81.4%-ը բաժին է հասնում ռեպո համաձայնագրերով ներգրավված միջոցներին, որոնք 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել են 3,630,101 հազար ՀՀ դրամ՝ գերազանցելով 2010թ.-ի ցուցանիշը (3,516,970 հազար ՀՀ դրամ) շուրջ 3.2%-ով:

Ընկերության սեփական կապիտալը տարվա սկզբից աճել է շուրջ 42.2%-ով և 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել 824,272 հազար ՀՀ դրամ (սեփական կապիտալը 2010թ.-ի վերջին կազմել էր 587,836 հազար ՀՀ դրամ): 2011թ.-ի արդյունքներով

Ընկերությունը ստացել է 258,139 հազար ՀՀ դրամի գույք շահույթ, ինչն ավելի քան 62.7%-ով ավել է 2010թ.-ի համապատասխան ցուցանիշից (158,624 հազար ՀՀ դրամ):

2011թ.-ի ընթացքում Ընկերության կողմից հայտարարվել և վճարվել են շահութաբաժիններ՝ ընդհանուր 150,624 հազար ՀՀ դրամ գումարի չափով: Հարկ է նշել, որ Ընկերությունը 2012թ.-ի ընթացքում նախատեսում է վճարել շահութաբաժիններ մասնակիցներին 2011թ.-ի արդյունքներով առաջացած կուտակված շահույթից: Մասնակիցները նախատեսում են ավելացնել կանոնադրական կապիտալը ևս 250,0 մլն ՀՀ դրամով:

2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության կանոնադրական կապիտալը կազմել է 450,0 մլն. ՀՀ դրամ:

Ընկերության համախառն եկամուտները բաժանված են տոկոսային և ոչ տոկոսային եկամուտների. 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության տոկոսային եկամուտները կազմել են շուրջ 623,657 հազար ՀՀ դրամ, որոնցում գերակշռում են ՀՀ պետական և ոչ պետական արժեթղթերից ստացված տոկոսները (մոտ 600,770 հազար ՀՀ դրամ կամ ընդհանուր տոկոսային եկամուտների 96.3%-ը): 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ոչ տոկոսային եկամուտները կազմել են 401,796 հազար ՀՀ դրամ: Ոչ տոկոսային եկամուտների 43.1%-ը բաժին է հասնում վաճառքի համար մատչելի արժեթղթերի վաճառքներից ստացված օգուտներին (173,113 հազար ՀՀ դրամ), 21.1%-ը՝ ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթերի վերավաճառքից օգուտներին (84,609 հազար ՀՀ դրամ), 30,1%-ը՝ արտարժույթի վերագնահատումից ստացված օգուտներին (121,198 հազար ՀՀ դրամ), 0.1%-ը՝ խորհրդատվական այլ ծառայությունների մատուցումից ստացված միջնորդավճարներին և այլ գործառնություններից ստացված օգուտներին (368 հազար ՀՀ դրամ), և 5.6%-ը՝ արտարժույթի առավաճառքից ստացված օգուտներին (22,508 հազար ՀՀ դրամ):

Ընկերության տոկոսային ծախսերը 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել են 395,975 հազ. ՀՀ դրամ: Դրանց գերակշիռ մասը ռեզիդենտ բանկերի և վարկային կազմակերպության հետ կնքված ռեպո համաձայնագրերի գծով տոկոսներն են, որոնք կազմել են 375,969 հազար ՀՀ դրամ կամ տոկոսային ծախսերի 94,9 %-ը: Ընկերության տոկոսային ծախսերի 5%-ը բաժին է հասել վարկերի դիմաց վճարված տոկոսներին (19,855 հազար ՀՀ դրամ), 0.1%-ը՝ փոխառությունների դիմաց վճարված տոկոսներին (151 հազ. ՀՀ դրամ):

2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ոչ տոկոսային ծախսերը կազմել են 371,339 հազար ՀՀ դրամ: Ոչ տոկոսային ծախսերի 5.7 %-ը բաժին է հասնում անձնակազմի գծով ծախսերին (21,251 հազար ՀՀ դրամ), 5,6 %-ը՝ կառավարչական ծախսերին (20,824 հազար ՀՀ դրամ), 1,1%-ը՝ հասարակական կապերի գծով ծախսերին (4,055 հազ. ՀՀ դրամ), 2.3%-ը՝ ամրոտիզացիոն մասհանումներին (8,478 հազար ՀՀ դրամ), 0,8%-ը՝ բանկային ծառայությունների ծախսերին, միջնորդավճարներին և այլ ծախսերին (3,042 հազար ՀՀ դրամ): 2011թ. ընթացքում Ընկերությունն ունեցել է նաև 88,070 հազար ՀՀ դրամի կորուստներ վաճառքի համար մատչելի արժեթղթերի վաճառքներից և

վերաչափումից (ոչ տոկոսային ծախսերի 23.7%-ը), 68,428 հազար ՀՀ դրամի կորուստներ ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթերի վերավաճառքից (ոչ տոկոսային ծախսերի 18.4%-ը), 90,912 հազար ՀՀ դրամի կորուստներ արտարժույթի վերագնահատումից և 9,316 հազար ՀՀ դրամի կորուստներ արտարժույթի առուվաճառքի գործառնություններից: Ընկերության շահութահարկի գծով ծախսը կազմել է 56,963 հազար ՀՀ դրամ:

Այսպիսով, ամփոփելով նախորդ ժամանակաշրջանի կատարողականի վերլուծությունը, կարելի է նշել Ընկերության հետևյալ ուժեղ կողմերը.

- լիցենզավորված, արհեստավարժ, հմուտ և փորձառու ղեկավարություն և անձնակազմ,

- յուրաքանչյուր աշխատակցի կողմից հստակ պատկերացում Ընկերության առաքելության մասին,

- ճկունություն հաճախորդների հետ հարաբերություններում,

- գործունեության կանոնակարգվածության բարձր աստիճան,

- զարգացած տեղեկատվական և տեխնոլոգիական ենթակառուցվածք,

- բարի համբավ Հայաստանի Հանրապետության և միջազգային ֆինանսական շուկաներում:

Ընկերության թույլ կողմերին թերևս կարելի է դասել բրոքերային ծառայությունների մասով հաճախորդների ձևավորված բազայի սակավությունը, որի հիմնական պատճառը այդ ծառայությունների մատուցման հետ կապված բնակչության անվստահությունն է և ոչ տեղեկացված լինելը, ինչպես նաև ֆինանսական ճգնաժամի անմիջական ազդեցությունը ամբողջ աշխարհի վրա, որը որոշ չափով խաթարեց պոտենցիալ հաճախորդների վստահությունը դեպի ֆինանսական ոլորտ, որի վերականգնման համար պահանջվում է երկար ժամանակ:

Պետք է նշել, որ տարին եղել է Ընկերության ներքին կազմակերպական աշխատանքների, կանոնակարգման կատարելագործման, մատուցվող ծառայությունների և պրոդուկտների զարգացման ու տեսականու ընդլայնման տարի:

Ընդհանուր առմամբ պետք է նշել, որ Ընկերությունը գտնվում է շուկայում իր դիրքերի ամրապնդման և զարգացման փուլում, և նրա թույլ և ուժեղ կողմերը ավելի արտահայտիչ կդառնան ժամանակի ընթացքում:

Գործադիր տնօրեն

Վաղինակ Սարոյան

Գլխավոր հաշվապահ

Նարիա Մարգարյան